**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

# ՀՐԱՄԱՆ

<<20>> նոյեմբերի 2024թ. N ԳՔՀ/765-Ա

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ «ՖՈՒԴՍԻԹԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի « ա» ենթակետով, 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածի 33-րդ կետի 12-րդ ենթակետի 2-րդ պարբերությամբ նախատեսված «ՖՈՒԴՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Արմավիրի մարզպետի աշխատակազմի առաջարկված համաձայնագիրը չի կնքվել.

***հրամայում եմ՝***

1. «ՖՈՒԴՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /ՀՎՀՀ 01028873 հասցե՝ք. Երևան, ՆորՆորք 0090 Գայի պ/շ/11/20// ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով:

2. Սույն հրամանի օրինակը սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել լիազոր մարմնին և «ՖՈՒԴՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով այն ստանալուն հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

20.11.2024

X

VERIFIED OCSP 20.11.2024 14:37:12 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023